ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

27 հոկտեմբերի 2025թ. **N 68-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՔՎԵ» ԱՆՎԱՆՄԱՆ ՆԵՐՔՈ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԱՐԱՐԱՏՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Հայաքվե» անվանման ներքո համատեղ հանդես եկող «Երիտասարդական ակումբների դաշնություն» և «Արարատյան սերունդ» հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ «Հայաքվե» համատեղ հանդես եկող կազմակերպություններ) 21.10.2025թ. դիմումը 2025 թվականի նոյեմբերի 16-ին կայանալիք Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրվելու մասին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը.

«Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Մխիթարյանը և «Արարատյան սերունդ» հասարակական կազմակերպության տնօրեն Դ.Արիստակեսյանը 21.10.2025թ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացրել են դիմում, որում նշված է.

«Խնդրում եմ Ձեզ գրանցել «Երիտասարդական ակումբների դաշնություն» և «Արարատյան սերունդ» հասարակական կազմակերպությունների համատեղ դիտորդական առաքելությունը «Հայաքվե» անվանումով ս.թ. նոյեմբերի 16-ին կայանալիք Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրություններում:»:

Դիմումին կից ներկայացվել է «Երիտասարդական ակումբների դաշնություն» և «Արարատյան սերունդ» հասարակական կազմակերպությունների կանոնադրությունների, «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության՝ իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենները, «Երիտասարդական ակումբների դաշնություն» և «Արարատյան սերունդ» հասարակական կազմակերպությունների միջև կնքված հուշագիրը՝ «Հայաքվե» անվանումով 2025 թվականի նոյեմբերի 16-ին կայանալիք Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրություններում համատեղ դիտորդական առաքելությամբ հանդես գալու մասին, «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդների վարքագծի կանոնները, ինչպես նաև

«Արարատյան սերունդ» հասարակական կազմակերպության նախագահի և խորհրդի անդամների տվյալները և «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության նախագահության անդամների տվյալները:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը.

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

1) միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր.

2) Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, որոնց կառավարման մարմնի կազմում, բացառությամբ ժողովի, որևէ ներկայացուցիչ չի մասնակցում տվյալ ընտրություններին թեկնածուի կարգավիճակով, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:»:

Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասում նշված կազմակերպությունների դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Հավատարմագրման վերաբերյալ դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում ընտրություններ նշանակելու օրվանից հետո, սակայն ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ՝ Հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով: Հավատարմագրման հայտը հաստատելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմակերպությանը տրամադրում է օգտահաշիվ, որը կարող է վերականգնվել յուրաքանչյուր ընտրությունից առաջ: Հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ:

Հավատարմագրվելու վերաբերյալ դիմում ներկայացնելիս Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները պարտավոր են ներկայացնել իրենց դիտորդների վարքագծի կանոնները, որոնք պետք է համապատասխանեն ընտրությունների դիտարկման միջազգային սկզբունքներին և սույն օրենսգրքի կանոնակարգումներին:

Հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները կարող են հավատարմագրվել և դիտորդական առաքելություն իրականացնել համատեղ: Համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները կարող են հանդես գալ մեկ միասնական անվան ներքո: Համատեղ դիտորդության դեպքում հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները ներկայացնում են հավատարմագրման վերաբերյալ համատեղ դիմում և դիտորդների համատեղ ցանկ: Եթե համատեղ դիտորդական առաքելություն իրականացնելու համար դիմում ներկայացրած հասարակական կազմակերպություններից կամ հիմնադրամներից որևէ մեկը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին, ապա համատեղ դիտորդական առաքելություն իրականացնելու վերաբերյալ դիմումը մերժվում է միայն այդ կազմակերպությանը վերաբերելի մասով: Եթե դիմումի մերժման արդյունքով սույն օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանում է միայն մեկ հասարակական կազմակերպություն կամ հիմնադրամ, ապա այդ հասարակական կազմակերպությունը կամ հիմնադրամը հավատարմագրվում է որպես առանձին դիտորդական առաքելություն իրականացնող:

Սույն մասում նշված հասարակական կազմակերպություններն ու հիմնադրամներն իրենց դիտորդների համար կազմակերպում և անցկացնում են ընտրական օրենսդրության ու կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ուսուցում:

Հավատարմագրվելու դիմումը պետք է նշում պարունակի կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ընդունման և ուսուցման մասին:»:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Դիտորդների, միջազգային դիտորդներին և այցելուներին ուղեկցող թարգմանիչների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման կարգը, հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի էլեկտրոնային ձևերը և Հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով դրանց ներկայացման կարգը, դիտորդների, միջազգային դիտորդներին և այցելուներին ուղեկցող թարգմանիչների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այցելուների վկայականների ձևերը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022թ. հունվարի 21-ի N 3-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի՝ դիտորդների հավատարմագրման և հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու կարգի 8-րդ և 9-րդ կետերի համաձայն՝

«8. Հավատարմագրման վերաբերյալ դիմումը՝ հավատարմագրվելու վերաբերյալ հայտով և կից անհրաժեշտ փաստաթղթերով, Հանձնաժողով ներկայացվում է միայն էլեկտրոնային եղանակով: Դիմումին կից փաստաթղթերը սկանավորվում են և ներկայացվում PDF տարբերակով:

Հավատարմագրման համար դիմումին կից ներկայացվող հայտի էլեկտրոնային ձևաթուղթը, որի բովանդակությունը պետք է համապատասխանի սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին, ներբեռնվում է Հանձնաժողովի համացանցային կայքից: Հայտի էլեկտրոնային ձևաթուղթը լրացվելուց և դիմողի էլեկտրոնային թվային

ստորագրությամբ հաստատվելուց հետո՝ դիմումին կից մուտքագրվում (վերբեռնվում) է էլեկտրոնային հարթակ:

9. Հավատարմագրվելու վերաբերյալ դիմումը պետք է պարունակի դիմող կազմակերպության անվանումը և էլեկտրոնային փոստի հասցեն:

Էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված դիմումի տրման ամսաթիվը և ժամն ամրագրվում է ինքնաշխատ եղանակով: Էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված դիմումը պետք է ներկայացվի «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Էլեկտրոնային հարթակի միջոցով առանց էլեկտրոնային թվային ստորագրությամբ ներկայացված դիմումները չեն քննարկվում:

Եթե դիմումը ստորագրված չէ այն անձի կողմից, որն իրավասու է առանց լիազորագրի ներկայացնել կազմակերպությունը, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

Հավատարմագրվելու վերաբերյալ դիմումին կից ներկայացվում է.

1) հավատարմագրվելու վերաբերյալ հայտը, որը պետք է պարունակի դիմող կազմակերպության անվանումը, կազմակերպության գրանցման համարը, ծանուցման հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, նշում՝ կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ընդունման և ուսուցման մասին, ինչպես նաև ընտրության անվանման և օրվա մասին, կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, կազմակերպության պատասխանատուի տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, հեռախոսահամար), դիմումի տրման ամսաթիվը, դիմողի ստորագրությունը: Հայտը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային ստորագրությամբ:

2) կազմակերպության կանոնադրության պատճենը (համատեղ դիտորդության դեպքում՝ համատեղ հանդես եկող կազմակեպությունների կանոնադրությունների պատճենները),

3) կազմակերպության կառավարման մարմնի կազմը (համատեղ դիտորդության դեպքում՝ համատեղ հանդես եկող կազմակերպություններից յուրաքանչյուրի կառավարման մարմնի կազմը), որը պետք է ներառի կազմի անդամների ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

4) դիտորդների վարքագծի կանոնները,

5) համատեղ դիտորդության դեպքում՝ հասարակական կազմակերպությունների՝ համատեղ դիտորդությամբ հանդես գալը հավաստող փաստաթուղթ (գրություն, հուշագիր և այլն), որը պետք է նշում պարունակի համատեղ հանդես եկող կազմակերպությունների կողմից դիտորդական առաքելություն իրականացնելու համար սահմանված միասնական անվանման մասին:»:

«Հայաքվե» համատեղ հանդես եկող կազմակերպությունների դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրել է, որ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկից բացակայում է հավատարմագրվելու վերաբերյալ հայտը: Միաժամանակ, Կենտրոնական ընտրական

հանձնաժողովն արձանագրում է, որ թեև դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկում ներառված է ««Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդների վարքագծի կանոնները» անվանմամբ փաստաթուղթ, սակայն ներկայցված դիմումում բացակայում է նշում՝ «Հայաքվե» համատեղ հանդես եկող կազմակերպությունների դիտորդների վարքագծի կանոնների ուսուցման մասին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի ժամը 17:00-ին հրավիրված նիստին ներկայացել է դիմումատու կազմակերպության ներկայացուցիչ Ատոմ Մխիթարյանը, որը ներկայացրեց լրացված հայտը՝ նշելով, որ այն դիմումին կից չէր ներկայացվել տեխնիկական պատճառով: Ներկայացված հայտի ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ այն համապատասխանում է դիտորդների հավատարմագրման հայտերին ներկայացվող պահանջներին, այդ թվում՝ պարունակում է նշում կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ընդունման և ուսուցանման մասին:

Միաժամանակ, դիմումատու կազմակերպության ներկայացուցիչ Ցոլակ Ակոպյանը ներկայացրեց «Հայաքվե» ապրանքային նշանը գրանցելու մասին Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գրասենյակի 10.10.2025թ. որոշումը, որը ներառվում է վարչական վարույթի նյութերում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատու հասարակական կազմակերպությունների դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը համալրվել է, հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022թ. հունվարի 21-ի N 3-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի 10-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Երիտասարդական ակումբների դաշնություն» և «Արարատյան սերունդ» հասարակական կազմակերպությունների 20.10.2025թ. դիմումը բավարարել և հաստատել «Հայաքվե» համատեղ հանդես եկող կազմակերպությունների դիտորդների հավատարմագրման հայտը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**